ԼԵՌՆԱՅԻՆ ԽԱՐՏԻԱ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Սույն Լեռնային խարտիայի մասնակից պետությունները՝ ի դեմս Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով ապահովել Տնտեսական միության գործունեության ձեւավորումը եւ արդյունավետ գործունեությունը ընդերքի ուսումնասիրության, հետախուզման, օգտագործման եւ պահպանության բնագավառներում կառուցվածքային ընթացակարգերի եւ այլ փոփոխությունների տարաժամկետության եւ ինքնատիպության պայմաններում, որոնք տեղի են ունենում Կողմերի ժողովրդական տնտեսության մեջ եւ պայմանավորում են համատեղ ջանքերի նպատակահարմարությունը այդ փոփոխություններին աջակցելուն եւ ապահովմանը, լինելով համոզված, որ Կողմերի լեռնաարդյունահանող եւ երկրաբանական բնագավառների փոխլրացնող հնարավորությունների հերթական իրագործումը դրական է ազդում ժողովրդական տնտեսությունը հանքահումքային պաշարներով ապահովման վրա շրջակա միջավայրի պահպանության եւ աշխատանքների անվտանգության վրա եւ ընդհանուր առմամբ կայունացնող ազդեցություն է թողնում Կողմերի տնտեսության վրա,ճանաչելով Կողմերի սուվերեն իրավունքներն ու պետական սուվերենիտետը ընդերքի նկատմամբ, վճռականությամբ լի նպաստելու հանքահումքային պաշարների ընդհանուր շուկայի ստեղծմանը եւ զարգացմանը՝ փոխշահավետ առեւտրային հարաբերությունների հաստատման եւ համատեղ ներդրումային նախագծերի եւ ծրագրերի իրականացման միջոցով, համոզված լինելով համատեղ գիտահետազոտական, նախագծային եւփորձարարակոնստրուկտորային աշխատանքների կազմակերպման անհրաժեշտության մեջ լեռնային գործի եւ երկրաբանության բնագավառներում,

հայտնելով պատրաստակամություն համակարգելու իրենց քաղաքականությունը տնտեսության լեռնաերկրաբանական մասնաճյուղի զարգացման ոլորտում, համագործակցելու համապատասխան գործնական միջոցառումների իրականացման գործում ստորեւ բերված սկզբունքների հիման վրա,

ղեկավարվելով Անկախ Պետությունների Համագործակցության Կանոնադրությամբ եւ Տնտեսական միության ստեղծման մասին Պայմանագրով, այլ փաստաթղթերով, որոնք ստորագրվել են Համագործակցության մասնակից պետությունների բազմակողմ համագործակցության շրջանակներում,

ընդունեցին Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Լեռնային խարտիան, այսուհետ՝ Լեռնային խարտիա:

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կողմերը, որպես համագործակցության գլխավոր նպատակ, սահմանում են ուսումնասիրության, հետախուզության, ընդերքի օգտագործման եւ պահպանության ոլորտում համատեղ գործողությունների փոխադարձ օգնությունը եւ համակարգումը հետեւյալ ուղղություններով.

ընդերքի ուսումնասիրության, հետախուզման, օգտագործման եւ պահպանության ոլորտում օրենսդրական եւ այլ նորմատիվ ակտերի փուլային մերձեցումը եւ ներդաշնակեցումը,

շուկայական հարաբերությունների ձեւավորման եւ զարգացման պայմաններում տնտեսական համագործակցության իրավական բազայի կատարելագործումը,

փոխընդունելի հիմքով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություն եւ հանքահումքային հիմքի վրա վերարտադրություն, օգտակար հանածոների եւ դրանց վերամշակման (վերաձեւավորման) ապրանքների արտադրության, տեղափոխման եւ օգտագործման արդյունավետության բարձրացման իրականացում,

պետական իշխանության եւ կառավարման մարմինների արդյունավետ համագործակցության նոր մեխանիզմների մշակում եւ առաջարկ, ինչպես նաեւ տնտեսական գործունեության սուբյեկտների՝ ընդերքի ուսումնասիրման, հետախուզման, օգտագործման եւ պահպանման բնագավառներում:

Կողմերն իրենց համագործակցության մեջ ղեկավարվում են փոխադարձ հարգանքի,

վստահության, փոխօգնության, անխտրականության, միմյանց գործերին չմիջամտելու, իրենց վրա վերցված պարտականությունների համար պատասխանատվության, վեճերի խաղաղ ճանապարհով կարգավորման սկզբունքներով:

Կողմերը բարենպաստ մթնոլորտ են ստեղծում լեռնաարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների գործողության եւ ներդրումների ու ժամանակակից տեխնոլոգիաների ներհոսքի համար՝ ընդերքի ուսումնասիրության, հետախուզման, օգտագործման եւ պահպանության, պետության կողմից օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների ռացիոնալ հատուցման նկատմամբ հսկողության բնագավառներում շուկայական մոտեցումների ներդրման միջոցով:

Նշված սկզբունքներին համապատասխան, այդ նպատակին հասնելու համար Կողմերը նպաստում են հետեւյալ խնդիրների լուծմանը.

1. Հանքահումքային միջոցների եւ դրանց ապրանքների վերամշակման (վերաձեւավորման) շուկայի ստեղծում եւ զարգացում Համագործակցության մասնակից պետությունների ձեւավորվող ընդհանուր տնտեսական տարածքի շրջանակներում, այդ թվում՝ բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով Կողմերի տնտեսվարող սուբյեկտների փոխշահավետ կոոպերացիոն կապերի վերականգնման նպատակով:

2. Ընդերքին, դրանց հետախուզման եւ մշակման նկատմամբ մատչելիության ապահովում՝ Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան:

3. Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության, վերարտադրության, եւ հանքահումքային հիմքի որակական լավացման բնագավառում համատեղ ծրագրերի աշխատանքների մշակում եւ իրականացում:

4. Լեռնաարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների զարգացման եւ տեղավորման քաղաքականության ներդաշնակեցում:

5. Լեռնաարդյունաբերական համալիրի արդյունաբերական ենթակառուցվածքների զարգացման համար միջոցառումների իրականացում:

6. Տրանսպորտային ենթակառուցվածքների մատչելիության հեշտացումը՝ հանքահումքային միջոցների, ինչպես նաեւ դրանց վերամշակման (վերաձեւավորման) ապրանքների միջազգային տարանցման հոսքի նպատակներով:

7. Առեւտրային պայմաններով նոր տեխնոլոգիաների մատչելիության հեշտացումը, որոնք կիրառվում են հանքահումքային միջոցների հետախուզման, արդյունահանման, վերամշակման (վերաձեւավորման) եւ օգտագործման բնագավառներում:

8. Պայմանների ստեղծում, որոնք ապահովում են օգտակար հանածոների հանքատեղերի պաշարների ռացիոնալ եւ համալիր օգտագործումը:

9. Միջոցառումների իրականացման աջակցություն, որոնք նպատակաուղղված են միջոցների խնայողության տեխնոլոգիաների եւ արտադրությունների մշակմանը եւ ներդրմանը:

10. Անվտանգության տեխնիկայի բնագավառում համատեղ աշխատանքների ծրագրերի մշակում եւ իրականացում, որոնք նպատակաուղղած են անվտանգության բարձր մակարդակների ստացմանը եւ/կամ պահպանմանը, հանքահումքային միջոցների արդյունահանման եւ վերամշակման (վերաձեւավորման) ձեռնարկություններում խոշոր վթարների հետեւանքների վերացման գործում համագործակցությանը:

11. Շրջակա բնական միջավայրի պահպանության եւ տվյալ բնագավառում կոնկրետ համատեղ ծրագրերի աշխատանքների խնդիրների լուծմանը փոխհամաձայնեցված մոտեցումների մշակում եւ իրականացում:

12. Աջակցություն Կողմերի լեռնաարդյունաբերական համալիրներին ներդրումների եւ վարկերի ներգրավմանը: Կողմերի արտաբյուջետային աղբյուրներից միջոցների ներգրավման մեխանիզմների եւ պայմանների ստեղծման մասին:

13. Օգտակար հանածոների արդյունահանման, վերամշակման (վերաձեւավորման), լեռնաարդյունահանող արդյունաբերության համար սարքավորումների արտադրության, նյութերի, գործիքների, լեռնափրկարարական եւ այլ տեխնիկայի, վառելիքաէներգետիկ, քարածխամետալուրգիական, նավթագազաքիմիական եւ լեռնաարդյունաբերական համալիրների համատեղ ձեռնարկությունների ստեղծում:

14. Գիտական հետազոտությունների, հեռանկարային ծրագրային եւ փորձարարակոնստրուկտորական մշակումների առաջնային ուղղությունների հայտնաբերում, նշված հետազոտությունների եւ մշակումների համակարգում, մասնային հիմքով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող աշխատանքների, նախագծերի,

ծրագրերի ֆինանսավորում:

15. Նորմատիվ-մեթոդական փաստաթղթերի կատարելագործման եւ համաձայնեցման միջոցառումների համակարգում, որոնք կարգավորում են երկրաբանական-հետախուզական աշխատանքները համաշխարհային պրակտիկայում ընդունված պահանջների հիման վրա, որոնք վերաբերում են փուլերով, օգտակար հանածոների պաշարների դասակարգման, երկրաբանական հաշվետվությունների ձեւի եւ բովանդակության, օգտակար հանածոների պաշարների բալանսի եւ այլ երկրաբանական տեղեկատվության աշխատանքների բովանդակությանը:

16. Հանքահումքային միջոցների համաշխարհային շուկայի, ինչպես նաեւ գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիայի բնագավառներում իրավիճակի վերլուծությունը, ապրանքների եւ ծառայությունների համաշխարհային լեռնաերկրաբանական շուկայում գործողությունների փոխընդունելի ռազմավարության եւ մարտավարության մշակում:

17. Աջակցություն լեռնաարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների այլ ոլորտների ձեռնարկությունների, այդ թվում՝ պաշտպանական, որոնք պատրաստ են իրենց մոտ լեռնային սարքավորման նորացման, վերանորոգման եւ պատրաստման պատվերներ տեղադրելու, տեխնոլոգիաների մշակման եւ ծառայությունների մատուցման, որոնք կապված են երկրաբանահետախուզման, օգտակար հանածոների արդյունահանման, վերամշակման (վերաձեւավորման), դրանց տեղափոխման եւ օգտագործման հետ համագործակցությանը:

18. Աջակցություն կադրերի պատրաստման եւ որակավորման բարձրացման համակարգված միջոցառումների իրականացմանը, այդ թվում՝ երրորդ երկրների ուսումնական հաստատություններում, բիզնեսի, մարկետինգի, մենեջմենթի դպրոցների եւ կուրսերի կազմակերպմանը:

19. Լեռնային գործի ոլորտում, որը կազմված է լեռնային գիտության եւ տեխնիկայի տվյալների բանկի ստեղծմանը, սարքավորումների կոնկրետ արտադրողներին, նյութերի մատակարարներին, աշխատանքների եւ ծառայությունների կատարողներին ուղղված միջոցառումներ:

20. Կողմերի լեռնաարդյունաբերական օբյեկտներում աշխատանքների համար առաջարկվող մասնագետների իրավական պաշտպանության եւ սոցիալական երաշխիքների ապահովման մեխանիզմների ստեղծում եւ կիրառում:

21. Պայմանների ստեղծում, որոնք նպաստում են լրիվ ծավալով եւ կարեւորագույն տեսակների օգտակար հանածոների, դրանց վերամշակման (վերաձեւավորման) ապրանքների, լեռնային սարքավորումների, նյութերի, սարքերի, լեռնափրկարարական եւ այլ տեխնիկայի փոխադարձ մատակարարումների մասին սահմանված
ժամկետներում պայմանագրերի կատարմանը:

22. Լեռնաերկրաբանական ուղղվածության գիտաժողովների, մրցույթների, ցուցահանդեսների եւ նմանատիպ այլ միջոցառումների կազմակերպմանը աջակցություն:

23. Լեռնային գործի եւ երկրաբանության բնագավառում կատարվող աշխատանքների խրախուսում միջազգային եւ պետական պարգեւներով:

24. Օգտակար հանածոների հանքավայրերի աշխատանքների սոցիալ-տնտեսական հետեւանքների տեսությունների մշակում:

2. ԲԱԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Վերոհիշյալ խնդիրների իրականացման համար Կողմերը ջանքեր են ներդնում ընդերքի ուսումնասիրության, հետախուզության, օգտագործման եւ պահպանության ոլորտում օրենսդրության փուլային մերձեցման եւ ներդաշնակեցման նպատակով: Կողմերը կհամագործակցեն օրենսդրական եւ այլ նորմատիվ ակտերի ստեղծման ու կատարելագործման համար անհրաժեշտ բազային աշխատանքների կատարման ժամանակ, որոնց ցանկը բերվում է ստորեւ, որն էլ հանդիսանում է սույն Լեռնային խարտիայի անբաժանելի մասը:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կողմերը նկատի են առնում Համագործակցության մասնակից պետությունների զարգացման սպեցիֆիկ պայմանները եւ ճանաչում են Լեռնային խարտիայի նպատակների եւ խնդիրների իրականացման հնարավորությունները:
2. Սույն Լեռնային խարտիայում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:
3. Սույն Լեռնային խարտիայի ուժի մեջ մտնելուց երկու ամիս հետո Կողմերը կանցկացնեն համապատասխան ազգային մարմինների խորհրդակցություն՝ դրա իրականացման առաջնահերթ միջոցառումները որոշելու համար:
4. Սույն Լեռնային խարտիան ուժի մեջ է մտնում դրա ստորագրման օրվանից, իսկ պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ ներպետական ընթացակարգերի կատարում՝ ավանդապահին համապատասխան ծանուցումը հանձնելու օրվանից:
5. Սույն Լեռնային խարտիան բաց է այլ պետությունների միանալու համար, որոնք կիսում են դրա նպատակներն ու սկզբունքները:
6. Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ Լեռնային խարտիայից՝ այդ մասին ավանդապահին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով՝ ոչ ուշ, քան դուրս գալուց 12 ամիս առաջ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 1997 թվականի մարտի 27-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Լեռնային խարտիան ստորագրած պետություններին կուղարկի դրա հաստատված պատճենները:

Հավելված
Անկախ Պետությունների
Համագործակցության մասնակից
պետությունների 1997 թվականի
մարտի 27-ի Լեռնային խարտիայի

ՑԱՆԿ

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԲԱԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԵՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Ընդերքի ուսումնասիրության, հետախուզության, օգտագործման եւ պահպանության ոլորտում օրենսդրական եւ այլ նորմատիվ ակտերի կազմի, այդ ակտերի մշակման եւ գործողության մեջ դնելու կարգի սահմանումը:
2. Ընդերքից օգտվելու իրավունքի սուբյեկտների եւ օբյեկտների սահմանում:
3. Ընդերքի ուսումնասիրության, հետախուզման, օգտագործման եւ պահպանության հարցերով իշխանության եւ կառավարման մարմինների իրավասության սահմանում:
4. Ընդերքից օգտվելու սահմանափակումների սահմանում:
5. Ընդերքից օգտվելու իրավունքի լիցենզիաների տրամադրման կարգի սահմանում:
6. Ընդերքից օգտվելու իրավունքի լիցենզիաների բովանդակության, ձեւի, տեսակների, գործողության ժամկետների սահմանում:
7. Ընդերքից օգտվելու իրավունքի լիցենզիա տրամադրելու մերժման հիմքերի սահմանում:
8. Ընդերքից օգտվելու իրավունքի դադարեցման կարգի եւ հիմքերի սահմանում:
9. Ընդերքից օգտվելիս վճարումների եւ հարկերի կազմի, վճարումների գանձման եւ վճարումներից ազատելու պայմանների սահմանում:
10. Ընդերքի ռացիոնալ եւ համալիր օգտագործման եւ պահպանության հիմնական պահանջների մշակում:
11. Օգտակար հանածոների արդյունահանման հետ կապ չունեցող օգտակար հանածոների հանքերի եւ ընդերքի օգտագործման տարածքների կառուցման պայմանների

սահմանում:
12. Ընդերքի ռացիոնալ եւ կոմպլեքս օգտագործման եւ պահպանության պետական հսկողության սկզբունքների ձեւավորում:
13. Ընդերքի համալիր երկրաբանական ուսումնասիրության հիմնական պահանջների մշակում:
14. Ընդերքի մասին երկրաբանական տեղեկատվության սեփականության հարցերի լուծում:
15. Հետեւյալ աշխատանքների կազմի եւ բովանդակության նկատմամբ պահանջների ձեւավորում.
- օգտակար հանածոների նկատմամբ կոնդիցիաների սահմանում,
- օգտակար հանածոների դուրս հանման (կորստի)՝ դրանց արդյունահանման եւ վերամշակման ժամանակ, այդ թվում՝ օգտակար հանածոների հանքերի պաշարների համալիր յուրացման պայմաններում որակական եւ քանակական ցուցանիշների սահմանում եւ հաշվառում,
- տնտեսվարման շուկայական մեխանիզմների գործողության պայմաններում օգտակար հանածոների հանքավայրերի տնտեսական գնահատում,
- օգտակար հանածոների պաշարների պետական հաշվառում եւ լեռնային հատկացումների գրանցում,
- օգտակար հանածոների պաշարների պետական բալանսների մշակում,
- լեռնային հատկացումների, օգտակար հանածոների հանքավայրերի եւ դրսեւորումների պետական կադաստրների մշակում,
- օգտակար հանածոների բալանսային պաշարների դուրս գրման կարգի սահմանում,
- օգտակար հանածոների արդյունահանման հետ կապ չունեցող նպատակներով օգտագործման տրամադրված լեռնային հատկացումների պետական հաշվառում եւ գրանցում:
16. Նախագծման համար հիմնական պահանջների մշակում.
օգտակար հանածոների արդյունահանման ձեռնարկությունների,
օգտակար հանածոների նախնական վերամշակում իրականացնող ձեռնարկություններ,
օգտակար հանածոների արդյունահանման հետ կապ չունեցող ստորգետնյա սարքավորումներ:
17. Աշխատանքների անվտանգ իրականացման նորմերի եւ կանոնների, պահանջների եւ պարտավորությունների մշակում ընդերքի պահպանության համար օգտակար հանածոների արդյունահանման, վերամշակման, վերաձեւավորման, ինչպես նաեւ ընդերքը օգտագործելիս օգտակար հանածոների արդյունահանման հետ կապ չունեցող նպատակներով, այդ թվում՝ հատուցված լեռնային արտադրանքների եւ բնական ստորգետնյա տարածությունների, դրանցում ժողովրդատնտեսական օբյեկտների տեղադրման նպատակով:
18. Վեճերի լուծման կարգի սահմանում, որոնք առաջանում են լեռնային տրամադրումների տիրապետման, օգտագործման եւ տնօրինման հարաբերություններից եւ ընդերքի մասին օրենսդրության խախտման համար պատասխանատվության սահմանումից:
19. Կողմերի միջեւ վեճերի լուծման դատական եւ այլ պրակտիկայի ընդհանրացում, վեճերի լուծման գործիքների կատարելագործում սույն Լեռնային խարտիային, միջազգային իրավունքի նորմերին եւ սկզբունքներին համապատասխան:
20. Կառուցված շինությունների տակից օգտակար հանածոների պաշարների հանման պայմանների սահմանում:
21. Ընդերքից օգտվելիս երկրաբանատեղեկատվական տեխնոլոգիաների նկատմամբ պահանջների մշակում:

* Խարտիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1999 թվականի մարտի 4-ից: